9. ԴԱՄԸՐՃՈՒ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակոց կէղնի, չի էղնի մե հարուստ թագավորմ կէղնի։

Էդ թագավորը շատ հարուստ կէղնի, հրմը հեչ բան չի ունենա, մե աղջիկմ կունենա։

Թագավորը իրան համար կունենա մե սառաֆմ։ Էդ սառաֆը վեց ամսական պզտի տղեմ կունենա։ Էդ թագավորի աղջիկը միշտ կը-զրկե իրանց նոքյարին, էդ տղին բերել կուտա, գուզե, կը պաքե, ետ էլի կը ճամփե իրանց տունը։

Էդպես ամիսմ էրկուս կանցնի։ Մե օրմ էլ աղջիկը կանչե կը նո-քյարին.— Տղա,— կըսե,— մե գնա սառաֆի տղեն բեր։

Գելլե էդ նոքարը կէրթա, էդ տղեն կառնի գուքա, կուտա թագա-վորի աղջկան։

Թագավորի աղջիկը գուզե, կը պաքե, ցորեկվա վախտն օր շոգը կը զուռե՝ կառնի էդ տղին, կը քնի։ Քնած վախտը ինչըղ կէղնի, տղի վրա գընկնի, տղեն կը խեղդի։ Թագավորի աղջիկը բիրտան զարթնի կը, տեսնի կ'օր, ինչ տեսնի, տղեն մեռեր է։ Քիչմ գուլա, էս կողմ, էն կողմ, ի՞նչ էնե, արևը հ'երթիկեն թուեր է։

Կանչե կը իրանց նոքյարին.— Տղա,— կըսե,— քեզի հ'իրեք հա-ուր մանեթ կուտամ, էս տղին տար մեկ տեղմ թաղե արի, օր սառա-ֆը քեզի կը հարցընե, ըսա բերեր եմ ձեր տունը։

Նոքյարը կըսե.— Շատ լավ։

Կառնի տղեն, կը տանի, մե փեսերիմ տակ կը պահե ու գուքա։

Սառաֆը մարդ կը ղրկէ, տղին գուշէ։ Աղջիկը կըսէ կ'օր. «Ես նոքյարի հետ ճամփեր եմ»։

Սառաֆը էս կողմ, էն կողմ հարցնէ կը, տղի հէչ ձենը չի հ'ելնի։

Է՜, ինչ էներ, թագավորի աղջիկ էր, չէր կրնա հախեն գա։ Էդպես էլ կանցնի։

Մէ օրմ էդ թագավորի նոքյարը, իրանց տան դեմը մէ մկիտանմ կար, կէրթա էդտեղ խմելու, կը տեսնի օր քառսուն հատ լոթի, ամենքը իրան սիրականին առած էդտեղ փաթթված խմեն կը։ Լոթու մեկը կը վերցնէ էդ թագավորի նոքյարին կըսէ կը, թէ.— Տեսնի՞ս կը ըիտտունս էլ սիրեկան ունինք, դու ես, օր հէչ բան չունիս։

Էդ նոքյարը դառնա էգոնց կըսէ.

— Ա՛յ ֆողը ձեր գլխուն, դուք էլ գիտեք թէ սիրեկան ունի՞ք։ Սիրեկանը իմիս պես կէղնի, օր թագավորի աղջիկ է, ինչքան փարա ուզեմ՝ չէ չկա։

Լոթիկը էդոր վրա կը խնդան, կըսեն թէ.

— Մի՛ լոբբըզնա, թագավորի աղջիկը քու վրեդ չի էլ թքէ։

Էդտեղ տղեն էգոնց հետ մարշ կը բռնէ, կըսէ օր՝ էս սըհաթիս էրթամ առնեմ գամ։

Տղեն կէրթա թագավորի աղջկա քովը, կըսէ.

— Թագավորի աղջիկ, հ'ել էրթանք մեր դեմի մկիտանը։

Աղջիկը կըսէ.— Խո չը խելըռար, հիմի հորս կըսեմ գլոխդ կը կտրէ։

Տղեն կըսէ.— Դու գիտես, չես գա, կէրթամ սառաֆի տղեն կը տանիմ ցուց կուտամ։

Աղջիկը կըսէ.— Տղեն հ'ո՞ւրտեղ է օր։

Կըսէ.— Քու ի՞նչ գործն է, ես պահեր եմ։

Աղջիկը ինքը խելացի աղջիկ, կը տեսնի օր խայտառակ պըտի էղնի.

— Գնա,— կըսէ,— էդ տղին հ'ուրտեղ օր պահել ես, հանե տար թաղե, արի՛, էրթանք։

Նոքյարը կէրթա կը հանե, տանի մեկ տեղմ կը փորե, կը թաղե ու գուքա։

Աղջիկը տղին կառնի, գլոխը կը փաթթե օր մարդ չճանչե, տղի հետ կէրթա դյուզ մկիտանը։ Աղջիկը կը տեսնի օր, ինչ տեսնի, քառսուն սալախանա, ամենքը իրան սիրականի հետ, դյախլին կայներ խմեն կը։

Աղջիկը ինչքան օր չէղնիր, թագավորի աղջիկ էր, շատ, քիչ ու-

սում ուներ, էդոնց բարով տվեց ու կայնավ։ Սալախանեքը տեսան օր տղի խոսքը օղորթ էղավ։

Էդ թագավորի աղջիկը սալախանոցը ըսավ, թե.— Դուք բիտտուն նստեք, ես ձեզի պիտի ղուլլուխ էնեմ։

Էդ սալախանեքը համոզվան, նստան, աղջիկը սկսեց ղուլլուխ էնել։ Սկսեց մեկ մեկ կենացները խմել տալ։

— Հըմը,— ըսավ,— հեչ ստաքանի տակը չպըտի թողնեք։

Էդոնք թյասիբի ընկան. աղջիկը լցեց՝ էդոնք կոնծեցին։ Քառսունի կենացն օր պրծավ, էնտից էլ իրանց նոքյարի կենացը խմեց։ Էդոնք էնպես հարբան օր, խաշըլ խոտի պես ընկան քընան։ Աղջիկը հետը մե լավ սուր դանակմ էր տարե, էդ սալախանոցն էլ, էնոնց սիրականների էլ, իրանց նոքյարի էլ՝ բիտտունի գլոխը կտրեց, հ'ելավ դուս, էնպես գնաց իրանց տուն, օր մարդ չտեսավ։

Օրմ, էրկու օր անցավ, մե օրմ աղջիկը հոր յախեն բռնեց, ըսավ օր.— Ընձի մե խուրջինմ օսկի տուր, էրթամ պըտի ղարիբ երկիր, խեյրաթխանա բանալու։

Թագավորը կըսե.— Խելըռա՞ր, ի՞նչ է։

— Չէ՛,— կըսե,— հերս, իսպես, իսպես բան պատահավ գլոխըս, էնքան մարդու հ'արունքը մտա, մե մունտրում հ'երեսեն, հիմի իմ խիղճս ինձի կը տանջե։ Գուզեմ օր խեյրաթխանեմ բանամ, մեղքիս թողութեն էղնի։

Հերը ինչ օր կէնե, չի կրնա օր աղջկան ետ կայնեցընե։ Բերե խուրջինմ օսկի կուտա, աղջկան էլ մե ղաթըմ տղի հալավ կը հագցընե ու ճամփու կը քցե։

Էդ աղջիկը գելնի կէրթա մե ղարիբ երկիրմ, կը տեսնի օր մե ճամփեմ կա՝ օխտը ճամփի կը բաժնվի։ Ինքն իրան կըսե, թե՝ էստեղեն լավ տեղ չկա, էստեղի էրթ ու գալը շատ կէղնի։

Բերե էդտեղ տներ կը շինե ու ճաշ կը պատրաստե, էրթըցող գալողին կուտեցընե, կը խմցընե, առանց փարի ճամփու կը դնե։

Օրվանմ մեկը մե տղեմ գուքա, կըսե.

— Աղա՛, ինձի նոքյար չե՞ս բռնե։

Կըսե.— Ինչո՞ւ չէ, ի՞նչ տամ օր կենաս։

Կըսե.— Քառսուն մանեթ, ղաթըմ հալավ։

Կըսե.— Լավ, տվի, գնա կուխնին։

Էդ տղեն սկսեց իրան գործն էնել, հերն էլ հախի կեսն առավ, գնաց։

Հեքիաթ օրեր էին, էկավ թեղմ տարին թըմըմավ։ Էդ տղի հերը էկավ օր էդ տղին տանի։ Էդ տղի անունն էլ Օհաննես էր։

Օհաննես,— ըսավ,— տարիդ թըմմեր է, կանչե աղիդ, հախդ առնենք, էրթանք։

Տղեն գնաց աղին իմաց տվեց, աղեն էկավ, ըսավ.

— Հա՛, ի՞նչ է բիձա, էկեր ես օր տղիդ տա՞նիս։

Ըսավ.— Հա՛, աղա, տարին թըմմեր է։

Էդ աղան ըսավ.— Ի՞նչ տամ օր մե տարիմ էլ ծառայե։

Հերն ըսավ.— Վաթսուն մանեթ, ղաթըմ հալավ։

— Չէ՛,— կըսե,— շատ է, հ՚իթսուն մանեթ, ղաթըմ էլ հալավ կուտամ։

Հերը ռաղի չէղավ, տղին առավ, գնաց։ Քիչմ գնացին, ճամփեն նստան, հերը էդ տղին ըսավ.— Ա՛յ տղա, սաղ տարիմ ծառայեցիր, չիմացար էդոր սըռը[1], ինչի՞ է էդ խեյրաթխանեն բացե, էրթըցող գալոդին բատիավա[2] հաց կուտա։

Տղեն կըսե.— Չէ՛, չիմացա։ Տե օր էդպես է՝ էրթամ պրտի մե տարիմ էլ ծառայեմ բալքի էգոր սըռը իմանամ։

Տղեն հորը կը ճամփե, ինքը ետ գուքա աղի քովը։

— Աղա՛,— կըսե,— ծառայեմ կը էդ հախով։

Աղեն կըսե.— Հը՛, փոշմընա՞ր, շիտակն ըսա՛, ինչ մտածեցիր, օր էկար։

Տղեն կըսե.— Հեչ, աղա, ի՞նչ պըտի մտածեմ։

Աղեն օր շատ կ՚ստիպե, տղեն կըսե։

— Աղա՛, քեղնեն պահեմ, աստծո՞ւց ինչ պահեմ։ Մե տարիմ ծառայեցի, քու սըռըդ չիմացա, թե ինչի՞ ես էս խեյրաթխանեն բացե, էրթցող գալոդին առանց փարի հաց կուտաս։

Աղան ըսավ.— է՞, Օհաննես, իմ սըռըս դիժար է իմանալը, Ֆիլան տեղը մե նալբանտմ[3] կա, չաքճով նալին կը ղարկե ու կը սըրսըփա։ Գնա՛ էնոր սըռը իմացի, արի, ես էլ իմս կըսեմ ու քեղի էլ կը բախտավորցընեմ, տեսնիմ կը օր շատ խելացի տղա ես։

Տղեն կըսե.— Կէրթամ։ Գելլի աղեցեն կառնի մե լավ ձիմ, մե քանիմ հարուը մանեթ էլ ճամփի խարշլըղ, գըյնի ճամփա։ Աթա հարաքյաթ, ղամչիա բարաքյաթ սուր հա սուր։ Կէրթա կը տեսնի օր, ի՞նչ տեսնի, աղի ըսածի պես մե դամըրճիմ չաքուճը ձեռքին նալին կը ղարկե ու կը սըրսըփա։

— Բարև, նալբանդ ախպեր,— կըսե։

---

[1] Գաղտնիք (Ս. Բ.)։

[2] Զրի (Ս. Բ.)։

[3] Պայտառ (Ս. Բ.)։

Նալբանդը կըսե.— Աստծու բարի՞ն, դու բարով էկար, հ՞ո՞ւրտից էկար, հ՞ուր կէրթաս։

Տղեն կըսե.— Նալբանդ ախպեր, ես էկեր եմ քու քովդ, օր քու սըռըդ իմանամ, թե ինչի՞ համար էդ նալին զարկես կը ու սըրսըփաս կը, կըսե,— դու քու աստվածդդ, դու քու սըռըդ ընձի ըսա, օր էրթամ բախտավորվիմ։

Նալբանդը կըսե.— է՞, տղա, գնա,— կըսե,— Ֆիլան տեղը մե դամըրճիմ կա, չաքուճը ձեռքին՝ օրսին[1] կը զարկե ու վեր կաշե, գնա էնոր սըռը իմացի, արի, ես էլ իմ սըռը կըսեմ։

Տղեն ի՞նչ էնե, մեկ անգամ ընկեր է։ Գելնի գրյնի ճամփա, շատ կէրթա, քիչ կէրթա, կէրթա կը տեսնի օր ի՞նչ, նալբընդի ըսածի պես մե դամըրճիմ նստեր է մե ֆորիմ մեջ, վրան գլոխը մըրոտ, չաքուճմ ձեռքը՝ օրսին կը զարկե ու վեր կաշե։

Բարև,— կըսե,— դամըրճի ախպեր։

Դամըրճին ետ կաշե, տղին կըսե.

— Աստծու բարի՞ն, դու բարով էկար, հ՞ո՞ւրտից էկար, հ՞ո՞ւր կէրթաս։

Տղեն կըսե.— Դամըրճի, դու քու աստվածդ, ես էկեր եմ օր քու սըռըդ հ՞իմանամ։

Դամըրճին զարմանալով կըսե.— Ի՞նչ սըռ։

Տղեն կըսե.— Ինչի՞ չաքուճը օրսին զարկես կ՚ու վեր կաշես։

Դամըրճին կըսե.— Հա՞, օր էդպես է, նստի պատմեմ։

Տղեն կը նստի, դամըրճին կըսկսե պատմել.

— Էստից տասնըհինգ տարի առաջ, ես էփեջա զանգին դամըրճի էի, տեսնի՞ս կը էդ խարապա դյուքընները, էդոնք ըիտտուն իմ բանվորներինս էին։ Մե օրմ էլ բանած տեղներս տեսա, օր մե մենձ զուշմ էկավ ծառի գլխուն կայնավ, վեր աշեցի էդ ղշին, մեկ էլ տեսնիմ՝ կտուցը զարկեց ընձի ու վեր հանեց։ Հեչ չիմացա թե հ՞ո՞ւր տարավ, յա ի՚նչ էրավ, մեկ էլ հ՚աչքս բացի, տեսա օր մե պալատիմ մեջ կայնած եմ։ Ես դամըրճի մարդ էի, բերին իմ մրոտ շորերս հանեցին, թագավորական շորեր հագցուցին, տարան մե լավ օթախըմ նստեցուցին։ Մեկ էլ տեսա էդ զուշը իրա լեղաբը[2] փոխեց, դառավ մե հրեշտակ աղջիկմ ու էկավ փաթթըվավ վիզս, ըսավ.

— Դո՚ւ ընձի մարդ, ես քեզի կնիկ, ես էդոր համար քեզի բերեցի։

---

[1] Սալ (Ս. Բ.)։

[2] Կերպարանք (Ս. Բ.)։

Ապրանք էդոր հետ մե իրեք չորս ամիս։ Ես դամբրճի մարդ, էդպես լսի կտոր չէի տեսե, էլ չիտեի խնդրլուս ի՞նչ էնեի։

Մե օրմ էլ տեսնիմ մե պզտի ղուշմ էկավ, խապար բերեց, օր նշանածիս ախպերը պըտի պսակվի։ Դու մի ըսե նշանածս թագավորի աղջիկ է էղե։

Ղուշը իրան լեզվով ինչ օր խոսաց, ես չհասկըցա. ղըշին ճամփեց ու նշանածս էկավ քովս.— Գիտե՞ս,— ըսավ,— մա՛րդ, ախպերըս պսակվի պըտի, ես պտի էրթամ հարսնիքին, քեզի չպըտի տանիմ, չունքի էնոնք խապար չեն, օր ես քեզի հետ կապրիմ։

Ես էլ ըսի՝ շատ լավ, ինչըղ օր գուզես, էնպես էրա։

Հ՚ետև կնիկս դարձավ ըսավ.— Մա՛րդ, ես կէրթամ, հըմը քոծը կը թողնիմ քովդ, հըմը չէղնի թե բան ըսես, աշե՛ տասն անգամ թամպահ կէնեմ, օր բան չըսես, օր ըսիր՝ էլ ձեռքես չես պրծնի։

Ես էլ ըսի՝ շատ լավ։

Կնիկս հ՚ելավ գնաց։ Հըմը էդ անիծած քոծը շատ սիրուն էր, կնկանեցս էլ սիրուն էր։ Առավոտ հ՚իրիկուն ընձի հաց կը բերեր, ես աղի պես նստած կուտեի կը խմեի։ Մե օրմ էլ հաց բերած տեղը միտքս փոխվավ, ըսի՝ Ի՞նչ գուզե էղնի, ես պըտի խոսք քցեմ էս քոծին։

Քոծին բանմ ըսի, տեսա օր նեղեցավ. շատ ըստիպեցի, ինչ գուզե էղնիր պըտի ձեռք բերեի։ Մեկ էլ տեսնիմ կնիկս դռնից ներս մտավ, ո՛չ բարով, ո՛չ խոսք, բերավ մրոտ շորերս հագուց ու մեկ էլ էն տեսա, օր էն հ՚առաջվա տեղս նստած եմ։ Ղուշը թողեց գնաց։ Էն բանվորներս էլ էին գնացե, դյուքանս էլ էր էղե խարապա, մնացել էր էս օրսրս ու շաքուճս։ Հիմի,— կըսե,— էս շաքուճը օրսին զարկեմ, վեր կաշեմ, թե հաճա՞փ են ղուշը պըտի գա, ընձի տանի՞, թե չէ։ Իմ մունտրռությանը հ՚երեսից էս օրը ընկա։ Ըհը, էս է իմ սըռրս, ղուրպան քեզի։

Էդ տղեն, էդ դամբրճուն մե քանիմ մանեթ փող կը բախշե ու կէրթա։ Կէրթա Նալբանդը քովը։

Նալբանդը կըսե.— Տղա՛, հ՚իմացա՞ր դամբրճու սըռը։

Տղեն կըսե.— Հ՚իմացա, հա՞լ, հեքիաթ էսպես բան։

Նալբանդը կըսե.—Օր էդպես է, նստի, ես էլ իմ սըռրս պատմեմ։

Նալբանդը կըսե.— Ես մե զանգին Նալբանդ էի, իրեք հարուր ղաթըր ունեի, հայտնի թուլարներ, բազրկյաններ գուքային կը, ընձի քիրա կուտային, տասը հազարով, քսան հազարով քիրա կը վերցընեի, տանեի, թափեի կը, գուքայի։ Օրմ էլ մե զանգին բազրկյանմ էկավ քովս, ըսավ.—Նալբանդ ախպեր, էսքան բեռ ունիմ, ինչ տամ օր էրթաս բերես։

Ես էլ եռսուն հազար մանեթ ուզեցի. բարըշանք, հ'ելա գնացիր։

Հ'ելա գնացի, գնացինք, գնացինք, սարիմ տակ մե մենձ մաղարիմ գուռ կայնանք։ Ղաթըրներն էգտեղ կայնեցուցինք, մենք նեսմտանք մաղարեն, տեսա օր, ի՞նչ տեսնիմ, մեթին մարգըրիտ, մեթին հ'ակնունանք, մեթին անգին քար, օսկի, արծաթ թեճ էին տված։

Բերինք լըցինք բեռները, հ'իրեք հարուր բեռ էղավ։ Բարձեցինք ղաթըրներուն, ընկանք ճամփա։ Ընկանք ճամփա, գալածներուս վախտը մեկ էլ միտքս փոխվավ, թե ընչի՞ էսքան բեռները ես բազըրկյանին տամ, թող էրկու բեռ էլ ընձի տա։ Ես ղոչաղ մարդ, թրիս հ'ետևն էլ կը կտրեր, հ'առաչն էլ, չոլի օրթան, ընչեն պըտի վախենայի։ Վրա հասա բաղրկյանին, թուրը քաշեցի, ըսի՝ էրկու բեռըդ ինձի պիտի տաս, թե չէ գլոխդ կը կտրեմ։

Բազրկյանն ըսավ.— Հ'իրեք բեռը քեզի, գլոխս ընչի՞ կը կտրես։

Քիչմ էլ էկանք, էլի թուրս քաշեցի թե՝ բեռների կեսը ընձի պտի տաս, թե չէ գլոխդ կը կտրեմ։

Ըսավ.— Կեսըն է՛լ քեզի։

Քիչմ էլ էկանք, հ'աչկածագ մարդ էի, թուրը քաշեցի, վրա հասա, ըսի՝ բեռները բիտտուն ընձի կուտաս, թե չէ գլոխդ կը կտրեմ։ Խեղճ բազրկյանը ըսավ.— Ախպեր, բիտտուն քեզի էղնի։

Քիչմ էլ էկանք, էն էր քաղքին մոտեցեր էինք, թուրը քաշեցի վրա հասա էդ բաղրկյանին, ըսի՝ էն եռսուն հազար մանեթդ էլ հետ չեմ տա։ Օր էդ ըսի, մեկ էլ բազրկյանը էնպես սիլլեմ[1] քաշեց հ'երեսիս օր՝ ընկա գետին, էլ չիմացա թե մեռած եմ, սաղ եմ։

Մեկ էլ զարթա, տեսա օր՝ ոչ բազրկյան կա, ոչ ղաթըր կա։ Էսկողմ, էն կողմ ընկա հեչ բան չգտա։ Գնացի էլի իմ նալբընդութենս ըսկսեցի։ Հիմի,— կըսե,— էս սըրսըփալս էնոր համար է օր՝ ամեն չաքուճ զարկելուս, սիլլեն միտքս գըյնի՝ վախենալուս կը սըրսըփամ։ Իմ սըռըս էլ էդ է, ղուրբան։

Տղեն կը հանե բանըմ էլ էդոր փեշքաշ կուտա ու կէրթա։

Հինգ-տասն օր ճամփա էրթըլուց հ'ետև կը հասնի իրա աղի կուշտը։

Աղեն կըսե.— Հը՛,— կըսե,— Օհաննես շան, հ'իմացա՞ր նալբընդի ու դամբրճու սըռը։

Տղեն կըսե.— Հ'իմացա։

Կը նստի, ինչըղ օր իրան նաղլ էին էրե, էնպես էլ ինքը նաղլը կէնե աղին։

---

[1] Ապտակ (Ս. Բ.)։

Աղեն օր գիմանա, կը պրծնի,— է՛հ,— կըսե,— Օհաննես շան, կեցի, ես էլ իմ սըռըս ըսեմ։

Էդաեղ հանե կը իրա շորերը, հագնի կը աղչկա շորեր, գուքա կըսե.

— Տեսնի՞ս կը, ես աղչիկ եմ, Ֆիլան թագավորի աղչիկը։

Ու ինչ օր գլխովը անցել էր, մեկ մեկ կը պատմե։ Վերջը կըսե.— Հիմի, ես քեզի կառնիմ, քեզնեն լավը չեմ կրնա ճարե.— Հըմը,— կըսե,— քուր ու աիպոր պես կէրթանք հորս քովը, թե հերս տվեց, էն է օր կը պսակվինք, թե օր չտվեց՝ ես քեզի խուրջինմ օսկի կուտամ, կը ճամփեմ։

Էդ խեյրաթխանեն, բան, բիտտուն կը բաշխեն մե քյասիբ մարդում ու իրանք գելնին գուքան թագավորի քաղաքը։

Թագավորը աղչկա գալն օր գիմանա կը, ուշքաթափ վրա կը վաղե, նես կը տանի, աղչկան էլ, տղին էլ հարց ու փորձ կէնե, գըլխներու գալածը բիտտուն գիմանա։

Վերցնե օխտն օր, օխտը գիշեր հարսնիք կէնե, էգ աղչկան կը պսակե էգ տղի հետ։ Վերջն էլ իրան թագավորութենը էնօր կուտա։

Էնոնք հասան իրանց մուրազին, գուք էլ հասնիք ձեր մուրազին։

Հ՚երկընքեն հ՚իրեք խնձոր ընկան, մեկն՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկն էլ ալամ աշխըրքին։